

Լավություն արա՛, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS դեկտեմբեր, 2017, N 4 (37) БАРЕГОРТС

§ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՛ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱԶԳ - ԲԱՆԱԿ. ՄԵՐ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱԽՈՍԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՉ



Նոր պուրակ հիմնողները

Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից այս է եղել. մեր կենսակերպը՝ ամեն ինչ հանուն Արցախի, հանուն թուրք-բոլշևիկյան սի-րախաղի հետևանքով և նման լիազորություններ չունեցող Կավբյուրոյի 1921 թ. հունիսի 4-ի՝ ցավոք, ցայսօր չչեղարկված ապօրինի որոշմամբ՝ նորա-հորջորջ Ադրբեջան հարևան պետությանը բռնակց-ված մեր հայրենիքի՝ հայոց Արցախ աշխարհի ա-զատագրության: Մեր ժողովրդի համախումբ միաս-նության ու հերոսական ոգու, նրա ազատատենչ խիզախ զավակների կամքով ու արյամբ, մեծ զոհո-ղությունների գնով Արցախն ազատագրվեց, մեր աչքի առաջ գրվեց հայոց ազատամարտերի պատ-մության ամենից փառավոր էջերից մեկը: Մեր սերունդը գրեց...

Դա իրականում ազգ-բանակ միասնականույթ-յան կենսագործումն է արդեն երեք տասնամյակ, սակայն հիմա է բարձրաձայն հանրահռչակվում հույժ անհրաժեշտ այս կարգախոսը՝ էլ ավելի է ամրապնդելու մեր ազգային միասնությունը հետզ-

հետև ավելի բարդացող աշխարհաքաղաքական հանգամանքներում:

Մարտական գործողություններով բուն պատե-րագմական իրականությունն ուրիշ էր, 1994 թ. մայիսի 12-ին կնքված խաբուսիկ ու փխրուն զինա-դադարից հետո շարունակվող մերօրյա «խաղաղ» պատերազմն՝ ուրիշ: Դեմ դիմաց կանգնած թշնա-մին, թվում էր, դեռևս պարտությունն ընդունելու քա-ջության և արժանապատվության նշույլներ ուներ: Նա դեռ այսքան լկտիացած չէր՝ Թուրքիայի կողմից քսի տրվող հոխորտացող վախկոտ շան նման, որ դողդողում է իրական շիտակ կռվից և իր կրակա-կետերն ու հարձակողական գեները թաքցնում է խաղաղ բնակավայրերում՝ իր իսկ աղերսած հրա-դադարի խախտումներն իրականացնելով հիմ-նականում դիվերսիայի՝ գաղտնի «կտցահարելով» մարդկային կյանքեր խլելու նենգավոր մարտավա-րություն կամ լայնածավալ կայծակնային հար-ձակման ձախողված փորձեր, ինչպես ապրիլյան քառօրյան էր: Սակայն թշնամին բոլոր դեպքերում անպատիժ չի մնում, միշտ էլ նրան սաստում է հայ

զինվորի շառաչուն ապտակը: Այո՛, այդպիսին է քառորդ դար առաջ մեզ պարտադրված պատերազմում կազմավորված հայոց բանակը, որ պատերազմի առաջին տարիներին իրեն պսակեց հաղթանակի անմահ փառքով և այսօր էլ միակ երաշխավորն է աղբրեջանական գերությունից ազատագրված, արդարության ծարավի արցախահայության, ինքնորոշված ու կայացած Արցախի Հանրապետության անվտանգության:

Հրի ու սրի միջով պարզերես անցած Արցախի ինքնապաշտպանական բանակն արդեն 25 տարեկան է: Հակառակ իր պարտությունն արդարացնելու միտումով մեզ բռնազավթիչ - ագրեսոր հերոսորդ, այդ պատերազմը մեզ պարտադրած անվերջ հոխորտացող թշնամու ապարարտ վայնասունի՝ նա՛ է ազատագրել մեզնից հափշտակված հայրենիքի մի մասը և այսօր էլ ինքնավստահ պահպանում է տարածաշրջանի խաղաղությունը:

Սակայն ուժերի քանակական հավասարություն չկա, և բացի ազգ-բանակ միասնությունից՝ այլ ելք չունենք մենք: Ազգը բանակով է կանգուն ու հարատև, բանակը համալրվում է սերնդաշար ազգով, որի ամեն միավորը հայրենիքի զինվոր է՝ անկախ կարգավիճակից, ծառայության կերպից ու աշխատանքի բնույթից:

Հայոց մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանը նույնպես զինվոր է՝ ոչ միայն առաջին պատերազմի մասնակից հերոսներով ու զոհերով, այսօր առաջնագծում ծառայող ուսանող-զինվորներով, այլև ողջ համակազմով ու սերունդներ դաստիարակելու հարյուրամյա պատմությամբ: Ավելին՝ նա գաղափարական առաջնորդ է նաև, որովհետև այստեղ են ծագել, քննարկվել ու կայացվել մեր ժողովրդին ու հայրենիքին վերաբերող բոլոր ճակատագրական վճիռները, ու հենց համալսարանականներն են եղել դրանց կենսագործողները: Պատահական չէ, որ այսօր էլ ԵՊՀ-ն բուռն մասնակցություն է ունենում Արցախի և նրա պետական համալսարանի զարգացման ծրագրերում, և նրա ղեկավար Արամ Միմոնյանն ու պրոռեկտորներն էլ անձամբ են պարբերաբար մասնակցում արցախյան միջոցառումներին:

Առաջին կազմակերպությունը, որ հետպատերազմյան տարիներին համակարգված օգնություն է ցուցաբերել վերականգնվող Արցախին, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամն» է եղել, որն աշխատել է գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանի ղեկավարությամբ: Արցախյան պատերազմի բովով անցած այդ նվիրյալ հայորդուն է վստահվել Արցախը մայր Հայաստանին կապող միջանցքի՝ Քաջաթաղի շրջանի՝ Բերձոր շրջկենտրոնի և հարակից գյուղերի խնամակալությունը: Արդեն ութերորդ տարին է՝ նրան արդյունավետ համագործակցում է ԵՊՀ երիտասարդների հետ տարվող աշխատանքների

կենտրոնը՝ Վահագն Վարազյանի գլխավորությամբ: Այս երկու կառույցների ջանքերի և հնարավորությունների նպատակասլաց համատեղումը տալիս է շոշափելի արդյունք թե՛ ուսանողների Արցախ այցելության, թե՛ դիրքապահ զորամասերի զինվորների հետ հանդիպումների, թե՛ ծառատունկի, թե՛ գիտամշակութային տարբեր միջոցառումների կազմակերպման ուղղություններով: Այդ նրանց ջանքերով են հիմնվել Երևան - Ստեփանակերտ մայրուղու Բերձորի հատվածի երկու կողմերում արդեն բերքատու ծառերով պուրակներն ու այգիները՝ նվիրված Հայոց պետականության 25-ամյակին, ԵՊՀ 90-ամյակին, լեզենդացած ազատամարտիկներ ՀՀ և Արցախի Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի, ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի, փառաբանված հրամանատարներ Լեոնիդ Ազգալոյանի, Դուշման Վարդանի Ստեփանյանի և ուրիշների հիշատակին:

ԵՐԵՔ ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ՕՐԵՐ ԱՐՑԱՒՈՒՍ

2017 թ. հոկտեմբերի 27-29-ին շուրջ 90 համալսարանականների դեպի Արցախ հերթական ուղևորությունը նվիրված էր հայկական զինված ուժերի ստեղծման 25-ամյակին: Մայր բուհի տարբեր ֆակուլտետների շատ ուսանողների համար սա առաջին ուխտագնացությունն էր դեպի Արցախ, դեպի ազատագրված հայրենիքի նվիրական վայրերը: Ամեն անգամ փոխվում է մեկնողների կազմը, որպեսզի հնարավորություն տրվի մյուսներին էլ:

Գ. Մելիքյանն ավելի վաղ էր ժամանել Արցախ՝ ծառատունկի նախապատրաստական աշխատանքներ կատարելու: Ինչպես միշտ՝ այս անգամ էլ ուղևորությունը հազեցած էր նպատակային միջոցառումներով, որով էլ այն ուսանողության համար դառնում է հայրենագիտության՝ հայրենիքի ծանաչողության դաս:

Օր առաջին: Գեղատեսիլ Սևանի եզերքով, Վարդենիսով ու Սոտքի ոլորաններով նորաբաց նորոզված մայրուղիով անցնելով ու Արցախի Հանրապետության սահմանները մտնելով՝ ուսանողները կանգ առան Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքում: Ինչպես հայոց բոլոր բռնազավթված տեղավայրերի անունները, այս քաղաքի անունն էլ վերաբնակեցված քրդերն ու ազերիները համապատասխանեցրել էին իրենց արտասանական տկար հնարավորություններին՝ բարեհունչ Քարվաճառը դարձնելով անիմաստ Քյարբաջար, Թարթառը՝ Թերթեր և այլն: Խորանդունդ ձորերով շրջափակված բարձրլեռնային այս քաղաքն այժմ վերստացել է իր նախկին հայեցի Քարվաճառ անունը և հայացել այնքան, որ ունի Վիլյամ Սարոյանի անվան նորակառույց տիպային նախանձելի դպրոց: Համալսարանականներն այս դպրոցի գրադարանին նվիրեցին ԵՊՀ հրատարակությամբ վերջին տարիներին լույս տեսած գրքերի մի պատ-

կառելի քանակություն: Վահագն Վարազյանի՝ ամեն ինչով դպրոցին օգնելու պատրաստակամության խոսքից հետո հայագիտական գրքերը ուսուցիչներին ու աշակերտներին հակիրճ ներկայացրեց ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սամվել Մուրադյանը: Քարվաճառ քաղաքում իրականացված մյուս կարևոր միջոցառումը ՀՀ զինված ուժերի 25-ամյակին նվիրված պուրակի հիմնադրումն էր, որին ԵՊՀ ուսանողների հետ մասնակցեցին նաև այդ օրը նրանց սպասող Շահումյանի շրջանի ղեկավարներ:

Ոլորապտույտ մայրուղին ուխտագնացներին Թարթառի զմայլելի կիրճով տարավ դեպի հաջորդ հանգրվան՝ անտառներում թաղված Դաղիվանքի վանական համալիր, որից առանձնապես տպավորվեցին ուսանողները:

Դեռևս մ. թ. 1-ին դարից Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչներից մեկի՝ Թադևոս Առաքյալի հետևորդ Դաղեի մասունքները պահպանող այս սրբավայրը հնում՝ մանավանդ Ջաքարյանների ժամանակ, եղել է հայ քրիստոնեական մշակույթի և գրչության կարևոր կենտրոններից մեկը:



Դաղիվանքի վանական համալիրը

Խորհրդային տարիներին քույր և ազերի իսլամադավան անասնապահների կողմից անասնագոմի ու ախոռի վերածված այս սրբավայրը 1993 թվին է ազատագրվել: 2007-ից այստեղ կատարվում են պեղումներ ու վերանորոգման աշխատանքներ, վերականգնվել են գրեթե ոչնչացված անգնահատելի որմնանկարները, բարեկարգվել են համալիրի շրջակայքն ու ծանապարհները, իսկ ժամատունն ու երիցատունը նորոգման ընթացքի մեջ են: Արդեն գործող վանական համալիրը դարձել է տարբեր վայրերից եկող զբոսաշրջիկների սիրելի վայրերից մեկը, ուր կանոնավորապես մատուցվում է պատարագ, կատարվում են պսակի և մկրտության ծիսական արարողություններ: Շուտով կավարտվեն նորոգությունները և համալիրը լիարժեք կճառայի իր նպատակին:

ԵՊՀ ուսանողներն այնուհետև այցելեցին հայոց Տիգրան Մեծ արքայի հիմնադրած Տիգրանակերտ, ապա՝ Գանձասար՝ միջնադարի հայ հոգևոր ծարտարապետության իրաշակերտություններից մեկը և, Վանք գյուղում ծաշելուց հետո, հասան Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտ, հանգրվանեցին «Արցախ պարկ» հյուրանոցում:

Օր երկրորդ: Որքան էլ ցանկալի՝ բոլոր միջոցառումներին համաժամանակյա մասնակցություն գործնականում անհնար էր: Հոկտեմբերի 28-ի առավոտյան համալսարանականները նախ արժանացան ԱՀ արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանի ընդունելությանը: Մեծարգո նախարարը համալսարանական պատվիրակությանը ներկայացրեց Արցախի ներկա քաղաքական կացությունը, աշխարհի տարբեր երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և Արցախի անկախ պետության միջազգային ճանաչման հնարավորություններն ու հեռանկարները և պատասխանեց ուսանողների հարցերին:

Այնուհետև համալսարանականները հարկադրված էին բաժանվել երկու խմբի. մեկը մեկնելու էր սահման՝ դիրքապահ զինվորներին այցելության և N գորամասին, ուր պարիլյան քառօրյայում ծառայել էին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսաբողներ Գևորգ Մանուկյանն ու Գոռ Դարմանյանը, հանձնելու համալսարանականների նվերը՝ արևալին մարտկոց, որի կարիքը կա մարտական հերթապահություն իրականացնելիս:

Անչափ կարևոր են առաջնագծի դիրքապահ զինվորների հետ համալսարանականների շփումները: Դրանք բարձրացնում են մեր հայրենիքի պաշտպանների մարտական ոգին, սերնդակիցների ու ողջ ժողովրդի հանդեպ սրբազան պարտքի, իր սուրբ գործի արդարացիության գիտակցությունը, նոր լիցք ու զորություն, ինքնավստահություն են հաղորդում, ազգ - բանակ կարգախոսի տեսականը վերածում գործնականի: Մյուս խումբն այցելելու էր Ստեփանակերտի՝ Ղոհված ազատամարտիկների թանգարան: Դա փառքի ու անմահության թանգարան է, միևնույն ժամանակ՝ անանց վշտի և հերոսական ողբերգության մերօրյա թանգարան:

Ցուցասրահներում դիտելով քեզ նայող շուրջ 3330 զոհվածների և 710 անհետ կորածների լուսանկարները՝ զգում ես՝ ինչ են պատգամում նրանք իրենց լուռ, խելացի ու հաղթողի վճռական հայացքներով: Այսքանը դեռ միայն արցախցիներն են, իսկ եթե սրանց մտովի գումարենք նաև ավելի քան երկու հազար հայաստանցի և սփյուռքահայ զոհվածներին, նոր կկարողանանք ըմբռնել արցախյան պատերազմում մեր ճակատագրական հաղթանակի ու այսօրվա խաղաղության գինը: Նորից շրջենք թանգարանի ցուցասրահներով, անխոս դիտենք զոհվածներին, նրանց անձնական

իրերն ու պարզունակ զենքերը՝ որսորդական հրացաններից, ինքնաշեն նետովող սուրճայր դանակներից մինչև նռնակներ, դիպուկահար հրացաններ, ինքնաձիգներ ու զնդացիրներ:



Արցախի հին ու նոր նվիրյալները: Վ. Վարազանն ու Գ. Մելիքյանը ապրիլյան պատերազմում թշնամական տանկեր և ուղղաթիռ խոցած համապարանական հերոսների՝ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ Գևորգ Մանուկյանի և Գոռ Դարմանյանի հետ

Ահա ինչու՞ են մեր ազատամարտիկները, նախքան հայոց բանակի կազմավորումը, կռվել թեթև ու ծանր տարբեր զինատեսակներով մինչև ատամները զինված թշնամու կանոնավոր բանակների դեմ: Կռվել են աներեր, հայրենի Արցախ թշնամուց ազատագրելու անսասան վճռականությամբ:

Ազատամարտիկների թանգարանը ափսոսանքով հազարավոր զոհերի խոստուն հայացքները դիտելու, լռությամբ խորհելու, ցավով ափսոսելու և արժանապատվորեն հպարտանալու վայր է:



Դրվագ թանգարանից մի ցուցապատից

Լուսանկարում պատկերվածը թանգարանի ցուցասրահներից մեկի մի պատն է միայն: Նայելք հանուն հայրենյաց նահատակների՝ մեզ նայող խոստուն ու վճռական վերջին հայացքներին, և կրմբորձներ ու կհասկանաք՝ նրանք ինչ են ասում մեզ ու

գալիք սերունդներին: «Ազգ - բանակ» կարգախոսը ներառում է հենց այս ամբողջը՝ բոլորիս հետ միասին: Բոլորս միասին ենք այս հողի և հայրենիքի, ապրողների ու նահատակների սուրբ հիշատակի տերն ու պաշտպանը: Եվ այս իրադրության մեջ ոմանք դեռ մտածում են հող հանձնելու մասին: Անունն ինչ են դնելու, չեն ամաչելու այս սուրբ նահատակներից:

Ուստի մենք, հայրենիքի համար բոլոր հին ու նոր նահատակվածների անունից, բոլոր պարտվողականների, հանձնվողականների ու վարանողների ականջն ի վեր առայժմ մռնչում ու վճռաբար կրկնում ենք Մեծ եղեռնի նահատակներից միայն մեկի՝ Սիամանթոյի երեք հարադողանք կարևոր պատգամները՝

- Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք...
- Մեռելներ կան, որոնց անգամ մը ևս պիտի մեռցնելու...
- Կեցցեն ըմբոստները, կեցցեն՝ Հայաստան:

Օր երրորդ: Հոկտեմբերի 29-ի վաղ առավոտյան համալսարանականներն ուղևորվեցին Շուշի, այնտեղից էլ՝ Բերձոր, ուր ծառ տնկելու փոսերը փորել ու մնացած ամեն ինչ նախապատրաստել էր պրոֆ. Գուրգեն Մելիքյանը: Արցախ ժամանած ամեն ուսանող ուզում է ծառ տնկել, այդ ծառի հետ նա իր ջերմությունն է հաղորդում հայրենի յողին ու նրանից ջերմություն ստանում: Այդ զգացողությունն ունենում են ծառատունկի բոլոր մասնակիցները թե՛ առաջ, թե՛ հիմա՝ մանավանդ նախախորհների տրնկած, արդեն հասակ նետած բերքատու ծառերը տեսնելով: Հազարավոր ծառերը կենդանի արարածների են նման, նորածնի պես ունեն խնամքի կարիք, մինչև կաշելն ու ինքնուրույնանալը ժամանակին ջրել է պետք, էտել, պահպանել աղետներից, վնասատուներից ու անասունների ոտնձգությունից: Այլապես ծառը կչորանա: Մատղաշ ծառերի համար իսկական աղետ են երաշտը և մանավանդ խոտածածկի հրդեհը, որից բռնկվում են նրանք: Այդպիսի աղետի զոհ էին գնացել Թաթույ Կրպեյանի անվան և այլ պուրակների մատղաշ ծառերը, որոնք փոխարինվեցին նորերով:

Սովորաբար ծառատունկն սկսվում է Լևոն-Զավեն Սյուրմեյանի «Ասացվածք ծառ տնկելու մասին» բանաստեղծությամբ, որն աղոթքի ու հիմներգի պես արտասանում է պրոֆ. Գ. Մելիքյանը: Դրան հետևում է ուսանողների աշխույժ եռուզեռը: Խմբակային աշխատանք է ծառատունկը. մեկը ծառն է հանում թաղարից, դնում փորված փոսի մեջ, բռնում է, որ չծովի մինչև ամրացնելը, մեկը կամ երկուսը բահերով հող են լցնում, մեկը ոտքերով տրորելով ամրացնում է հողը, բաժակ սարքում, մեկ ուրիշը դուլով կամ փողոկով ջրում է նորատունկը: Գ. Մելիքյանը, շտկում անփորձների թերությունները: Չես էլ զգում, թե ինչպես տնկիները

վերջացան ու փոսերը լցվեցին: Մեկ էլ ազդարարվում է ծառատունկի ավարտն, ու բոլորը հրավիրվում են ճաշկերույթի: Դա սովորական ռեստորանային ճաշկերույթ չէ, այլ Արցախին ու Հայաստանին, մեր ազգային սրբազան նպատակներին, մեր հայրենիքը ծաղկեցնելու երդման արարողություն, որն ուղեկցվում է ավանդական երգ ու պարով: Թնդում են Բերձորի լեռներն ու կիրճերը հայոց կենսահաստատ պարերով, ուսանողները մրցում են հայրենաշունչ երգերով: Կարծես չեն եղել անցյալի դառնությունները, սեփական հայրենիքում օտարականի կարգավիճակով ապրելու նվաստացումները և իր գլխի տերը լինելու հայ մարդու արդար ու ազնիվ ոգորումները: Հայ զինվորի հաղթանակը մեր ազգային հավաքականության նպատակասլաց կամքի դրսևորումն է:

Ազգովին արժանապատիվ ապրելու և հարատևելու նպատակով երկրային ժամանակավոր կյանքը զոհաբերելը բարձրագույն առաքինություն է, որով իմաստավորվում են անցողիկ կյանքն ու մեծ հավերժը: Հայրենի լեռների վեհությունն է ներշնչել հայ զինվորին ու խորհելու՝ Քո լեռները փառքի սյուներն են երկնահաս Կյանքիդ համար ընկածների: Հայ զինվորի սխրանքի շնորհիվ է սկսվել թեկուզև փխրուն խաղաղության ու հայրենակերտման ժամանակաշրջանը: Մեր և սերունդների պարտքն է նրան արժանապես մեծարելը: Այս վեհ նպատակն են համատեղ իրագործում Երևանի պետական համալսարանի երիտասարդական կազմակերպություններն ու «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»:



Ծառատունկի եռուզեռ



Հերթական ծառն է ամրանում Արցախի հողում



Ծառատունկից ու ճաշկերույթից հետո այսպես է ծավալվում ուսանողական շուրջպարը

**ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ՝ 30 000-ԱԿԱՆ ԴՐԱԾ**

Արևելագիտության ֆակուլտետ

- | | |
|-----------------------------------|-------------------------------|
| 1. Խաչատրյան Մարտին Յուրիի | — իրանագիտություն 2-րդ կուրս |
| 2. Սահակյան Վոլոդյա Վալերիկի | — իրանագիտություն 2-րդ |
| 3. Մխիթարյան Խաչատուր Արիստակեսի | — թյուրքագիտություն 2-րդ |
| 4. Բաղդասարյան Սպարտակ Էդուարդի | — արաբագիտություն 2-րդ |
| 5. Բաղայան Արթուր Հրաչյայի | — արաբագիտություն 2-րդ |
| 6. Փիլիպոսյան Լևոն Գարեգինի | — արաբագիտություն 2-րդ |
| 7. Աբովյան Պավլիկ Գագիկի | — արաբագիտություն 2-րդ |
| 8. Խաչատրյան Արսեն Հենրիկի | — իրանագիտություն 2-րդ |
| 9. Ներսիսյան Նարեկ Վոլոդյայի | — իրանագիտություն 2-րդ |
| 10. Ղազարյան Կարլեն Արայիկի | — արաբագիտություն 2-րդ |
| 11. Բիջոյան Գեղամ Հայկի | — արաբագիտություն 2-րդ |
| 12. Դարբինյան Մնացական Անդրանիկի | — իրանագիտություն 2-րդ |
| 13. Գրիգորյան Տիգրան Խաչիկի | — իրանագիտություն 2-րդ |
| 14. Կոստանդյան Վահան Համբարձումի | — թյուրքագիտություն 2-րդ |
| 15. Բարսեղյան Վահագն Սարգիսի | — արաբագիտություն 2-րդ |
| 16. Մարգարյան Հովհաննես Արմենի | — արաբագիտություն 3-րդ |
| 17. Հակոբյան Նորիկ Հարությունի | — իրանագիտություն 3-րդ |
| 18. Սարգսյան Տարոն Վրույրի | — արաբագիտություն 3-րդ |
| 19. Ավագյան Սևակ Վոլոդյայի | — արաբագիտություն 3-րդ |
| 20. Սերոբյան Մանվել Ավետիքի | — թյուրքագիտություն 3-րդ |
| 21. Գրիգորյան Համբարձում Լևոնի | — իրանագիտություն 3-րդ |
| 22. Բաղայան Սոս Սասունի | — իրանագիտություն 3-րդ |
| 23. Հովհաննիսյան Սիմոն Սամվելի | — թյուրքագիտություն 3-րդ |
| 24. Գյուլագյան Սամվել Ժիրայրի | — թյուրքագիտություն 3-րդ |
| 25. Ծատուրյան Ռաֆիկ Արմենակի | — թյուրքագիտություն 3-րդ |
| 26. Փանոսյան Գուրգեն Ռաֆիկի | — թյուրքագիտություն 3-րդ |
| 27. Հաջոյան Տիգրան Կարոյի | — թյուրքագիտություն 3-րդ |
| 28. Դադբաշյան Արկադի Արմենի | — իրանագիտություն 3-րդ |
| 29. Ասոյան Մհեր Թաթուլի | — թյուրքագիտություն 4-րդ |
| 30. Եղիազարյան Արգամ Արթուրի | — թյուրքագիտություն 4-րդ |
| 31. Միրզախանյան Հարություն Արսենի | — թյուրքագիտություն 4-րդ |
| 32. Հարությունյան Պերճ Արսենի | — թյուրքագիտություն 4-րդ |
| 33. Ղազարյան Ռոման Սամվելի | — թյուրքագիտություն 4-րդ |
| 34. Ազիզյան Տիգրան Արայի | — թյուրքագիտություն մագ. 1-ին |

**ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ՝ 120 000-ԱԿԱՆ ԴՐԱՄ**

1. Մարգարյան Դավիթ Ռուբենի — թյուրքագիտություն 1-ին
2. Մհերյան Դավիթ Խաչատուրի — արարագիտություն 2-րդ
3. Սարգսյան Տիգրան Հակոբի — իրանագիտություն 3-րդ
4. Վարոսյան Կարեն Արտավազի — թյուրքագիտություն 3-րդ
5. Հարությունյան Հովհաննես Արմենի — իրանագիտություն 3-րդ
6. Դավթյան Միսիթար Համլետի — թյուրքագիտություն 3-րդ
7. Հովհաննիսյան Ռոբերտ Խաչիկի — թյուրքագիտություն 3-րդ
8. Մաթևոսյան Գոռ Սեյրանի — իրանագիտություն 3-րդ

Արևելագիտության ֆակուլտետ

1. Մադոյան Սիրանուշ Գևորգի — արարագիտություն 4-րդ, 275 000 դ

ԵՊՀ ԱՅԼ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Բոյաշյան Արտավազ Դավթի — ԵՊՀ ինֆ. և կիրառ. մաթ. ֆակ. 4-րդ կուրս, 30 000 դ
2. Շեխուկ Շանթ — ԵՊՀ ինֆ. և կիրառ. մաթ. ֆակ. 2-րդ կուրս, 80 000 դ
3. Հակոբյան Գոռ — ԵՊՀ ինֆ. և կիրառ. մաթ. ֆակ. (հեռակա) 2-րդ կուրս, 30 000 դ
4. Հակոբյան Լյուդվիգ — ԵՊՀ ինֆ. և կիր. մաթ. ֆակ. (հեռ.), 2-րդ կուրս, 30 000 դ
5. Յուխանով Արման — ԵՊՀ ռոմանագերմանական ֆակ. 4-րդ կուրս (հեռակա), 60 000 դ
6. Գրիգորյան Ալբերտ Արթուրի — ԵՊՀ պատմության ֆակ. 5-րդ կուրս (հեռ.), 30 000 դ
7. Եղիկյան Նոյեմի Գեորգիի — ԵՊՀ արվեստաբանություն, մագ. 1-ին կուրս, 50 000 դ
8. Եղիազարյան Սեդա Վարդանի — ԵՊՀ հայ բանասիր. ֆակ., 1-ին կուրս, 30 000 դ
9. Կատվալյան Էմմա Կամոյի — ԵՊՀ ռոմանագերմանական ֆակ., 3-րդ կուրս, 30 000 դ
10. Ղազարյան Լաուրա Արմ. — ԵՊՀ ռոմանագերմանական ֆակ., 4-րդ կուրս, 30 000 դ
11. Գրիգորյան Սուսաննա — ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակ., մագ. 1-ին կուրս, 30 000 դ
12. Մելքոնյան Աշոտ Հրայրի — ԵՊՀ պատմության ֆակ., մագ. 1-ին կուրս, 30 000 դ
13. Բարխուդարյան Մամվել Աշոտի — ԵՊՀ Միջ. Հարաբերությունների ֆակ., 50 000 դ
13. Կիրակոսյան Յուրի Արմենի — ԵՊՀ իրավաբան. 2-րդ կուրս, 100 000 դ

ԱՅԼ ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍԱՆՈՂ ՉԻՆՎՈՐՆԵՐԻՆ՝ 30 000 ՊՐԱՄ

1. Ստեփանյան Սասուն — (մարտական հերթապահություն) ՀՊՏՀ տնտեսության կառավարման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակ., 3-րդ կուրս
2. Սարգսյան Վահագն — ԵՊՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետ 3-րդ կուրս
3. Հայրապետյան Լիանա — ՀՊՄՀ կուլտուրայի ֆակուլտետ, մագիստր. 2-րդ կուրս
4. Սողոմոնյան Նարեկ — (Արցախ, Ստեփանակերտ քաղաքի բնակ 1-ին կուրս
5. Մարգարյան Աննա — ՀՊԱՀ, Ստեփանակերտի մասնաճյուղ, ագրոնոմիայի ֆակուլտետ, (հեռակա) 5-րդ կուրս

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՃԱԿՆԵՐ

§¶áõñ.»Ý Ø»ÉÇùÙ³ÝÇª ø³ß³Ã³ÐÇ µ³½Ù³½³³İ ÁÝ³ÝÇùÝ»ñÇ ÑÇÙÝ³ñ³Ùի՛ հոգաբարձության խորհուրդը կրկին Ñ³Ù³ñ³ááõÙ չ Ù»Í Ù³ñ¹³è»ñ, Èáè²ÝÇ»É»èÇ Ñ³Ù .³ÕááÃÇ Ñ³Ù³ÙÝ³ÙÇÝ ÍÙ³ÝùÇ İ³½-Ù³á³İ»ñáÇáÝ»ñÇó Ù»İÇª §²Ý³ÑÇİ՛ ÑÇÙÝ³ñ³ÙÇ µ³½Ù³Ù³ ÿ³È³.³Ñ, լուսահոգի

Ü ² ¼ ° È Æ

â ² δ â Ú ² Ü Æ

³Ý³Ý İñÃ³Ãáß³İ ³é³ç³íáñ áðè³ÝáÕÝ»ñÇ Ñ³Ù³ñ:

ՓնօձօՍԱՇԿ Ի՜նձօ »Ý Ù³èÝ³İօ»É °ñև³ÝÇ á»³İ³Ý Ñ³Ù³Èè³ñ³ÝÇ դեղագիտության և քիմիայի ջ³İááÉİ»İÇ ուսանող - áðè³ÝáÕááÑÇÝ»ñÁ, áíù»ñ ááÝ»Ý ուսան և ³ñÓñ ³é³ç³İÇ ÙáááÕááóÝ և áñÇÝ³İ»ÉÇ Ի³ñ:

ՓնօձօՍԱՇԿ Ù³èÝ³İօ»É ó³Ý³óáÕÝ»ñÁ ÑÇÙÝ³ñ³-ÙÇ Ñá.³µ³ñÓáááÙ³Ý ÈáñÑñ¹ÇÝ ¹Ç Ùááõ Ù»Ý Կ»ñİ³Ù³ó-Ýááõ ÿñ³ .áñİ³Çñ Ի՜նն»Ý áñáý»éáñ ¶ááõñ.»Ý Ø»ÉÇùÙ³ÝÇ ³ÝááóÝáí:

ՉՄááõÙÝ»ñր փաստաթղթերի հետ միասին մինչև սեպտեմբերի 20-ը ներկայացնել օձ ³ñ»É³.ÇİáááÙ³Ý ջ³İááóÉİ»İÇ ¹»İ³Կառ:

Հոգաբարձությունը կրկին մրցույթ է հայտարարում նաև ակամավոր գրող, թարգմանիչ և հանրային գործիչ, §չխոնարհվող եղեգլ, երջանկահիշատակ

Մ Տ Ե Փ Ա Ն

Ա Լ Ա Ջ Ա Ջ Յ Ա Ն Ի

անվան կրթաթոշակի համար:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի այն ուսանող-ուսանողուհիները, ովքեր ունեն բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ

ÈØ²¶á²¼Ø`

¶խավոր խմբագիր` è²Øİ°È Øááð², Ú²Û

µ³Ý. ·Çİ. ¹áİíáñ, áñáý»éáñ

²²¶Ú²Û ², µ. . ¹., áñáý»éáñ

Ø°ÈÆØÚ²Û ¶, µ. . Á., áñáý»éáñ

èü²ðÚ²Û ²È, á. . Á., áñáý»éáñ

Ելույթերը ` Ó³դրումը` é. Մոլրադասի:

Օտառտունկի լուսանկարները` Չոհրաբ Ըռքոյանի:

Հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը հայտնում է, որ հնարավորություն ունի մասամբ վճանելու հետևյալ ուսանողների ուսման վարձերը.

- դիրքապահ զինվորների
- սիրիահայ ուսանողների
- Քաշաթաղի շրջանի ուսանողների
- երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ ուսանողներին
- գոհված ազատամարտիկների երեխաների:

Դիմումները մյուս փաստաթղթերի հետ միասին մինչև փետրվարի 10-ը ներկայացնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատ:

Ելնելով ստեղծված սոցիալական իրավիճակից՝ հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը որոշում է`

Միանվագ նյութական օգնություն տրամադրել հայրենական գիտության զարգացման մեջ առանձնակի ավանդ ներդրած մտավորականների ընտանիքներին:

Օարունակվում է ԽԵԱ §Կով՝ ծրագիրը:

Հոգաբարձության խորհրդի որոշմամբ՝ կովեր տրվում են Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում բնակվող բազմազավակ ընտանիքներին՝ ըստ երեխաների քանակի.

- ❖ 4 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է մեկ կով.
- ❖ 6 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է երկրորդ կովը.
- ❖ 7 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին տրվում է երրորդ կովը: